

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ

ՄԱԶԻԴ ԼՈՂՄԱՆՓՈՒՐ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈՂԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ՝ ԴՐԱՆՑ ԿԱՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ  
ԱՄԲՈՂԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻԻՀ ՄԱԶԱՆԴԱՐԱՆԻ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գ.00.11 - «Էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МАДЖИД ЛОГМАНПУР

ОЦЕНКА МЕТОДА КОЛЛЕКТИВНОГО УПРАВЛЕНИЯ ЛЕСНЫМИ  
ЭКОСИСТЕМАМИ С ЦЕЛЬЮ ИХ УСТОЙЧИВОГО ИСПОЛЬЗОВАНИЯ И  
СОХРАНЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ЦЕЛОСТНОСТИ  
В УСЛОВИЯХ МАЗАНДАРАНА, ИРИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата  
биологических наук по специальности 03.00.11 – «Экология»

ЕРЕВАН – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

կենսաբանական գիտությունների դոկտոր, պոֆեսոր

ժ.Հ. Վարդանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

կենսաբանական գիտությունների դոկտոր, պոֆեսոր

Գ.Հ. Օգանեզովա

կենսաբանական գիտությունների թեկնածու

Կ. Ա. Ղազարյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ.Աբովյանի անվան Հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. դեկտեմբերի 11-ին ժամը 14.00-ին ՀՀ ԲՈՂ-ի  
բուսաբանության և կենդանաբանության 035 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0040, Երևան, Աճառյան 1, ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ,

E-mail: botanyinst@sci.am

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի  
գրադարանում և botany.sci.am կայքում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. նոյեմբերի 11-ին:

035 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
կենսաբանական գիտությունների թեկնածու՝

Ա. Գ. Ղուկասյան

---

Тема диссертации утверждена в Институте ботаники НАН РА

Научный руководитель:

Член-корр. НАН РА,

доктор биологических наук, профессор

Ж.А. Варданян

Официальные оппоненты:

доктор биологических наук, профессор

кандидат биологических наук

Г.Г. Оганезова

К.А. Казарян

Ведущая организация:

Армянский государственный педагогический  
университет им. Х. Абовяна

Защита диссертации состоится 11-го декабря 2014г. в 14.00 часов на заседании  
специализированного совета 035 по ботанике и зоологии ВАК РА.

Адрес: 0040, Ереван, ул. Ачарян 1, Институт ботаники НАН РА

E-mail: botanyinst@sci.am

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института ботаники НАН РА  
и на сайте botany.sci.am

Автореферат диссертации разослан 11-го ноября 2014г.

Ученый секретарь специализированного совета 035,  
кандидат биологических наук

А. Г. Гукасян

**Աշխատանքի արդիականությունը:** Իրանի Իսլամական Հանրապետության շրջակա միջավայրի բաղադրիչների պատկանությունն օրախնդիր հարց է բնական պաշարների շարունակական դեգրադացման, կենսաբազմազանության կորստի և անապատացման համընդհանուր երևույթների կանխարգելման տեսակետից: Որպես բնական ժառանգության կարևորագույն բաղադրիչ բնական պաշարների թվում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում անտառները, որոնք ունեն բնապահպանական, սոցիալ-տնտեսական, ինչպես նաև ազգային անվտանգությունն ապահովող բացառիկ ռազմավարական նշանակություն: Մակայն բնական գործոնների բացասական ազդեցության և գերշահագործման արդյունքում անտառային էկոհամակարգերը ներկայումս խիստ վտանգված են:

Անտառները հանդիսանում են կարևոր գործոն շրջակա միջավայրի պահպանության և կայունության ապահովման գործում, կարևոր նշանակություն ունեն երկրի կայուն զարգացման ապահովման մեջ, իսկ անտառային կենսազանգվածը ցուցանշում է տվյալ երկրի զարգացվածության մակարդակը: Անտառների ու կենսաբազմազանության էկոլոգիական պաշտպանության և կայուն կառավարման հարցերը համամոլորակային առավել հաճախ քննարկվող խնդիրներից են: Այս քննարկումներն ուղղված են անտառային պաշարների մոնիտորինգի և գնահատման նոր քաղաքականության մշակմանը:

Ներկայումս մարդը սկսել է գիտակցել, որ բնության մեջ իր ցանկացած գործունեություն ունի սահմանափակումներ, որոնք նա պետք է հաշվի առնի՝ էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով: Ըստ Կոլումբիական համալսարանի 2005թ. հրատարակած զեկույցի՝ Իրանը կայուն էկոլոգիական զարգացման տեսանկյունից 146 երկրներից 132-րդն է: Հաշվի առնելով խնդրի հրատապությունը և այն հանգամանքը, որ երկրի հսկա տարածքներ անապատային են, առավել քան անհրաժեշտություն է անտառների կայուն կառավարման ռազմավարության ապահովումը: Հետևաբար, կայունության տարբեր քանակական և որակական չափանիշների ուսումնասիրությամբ՝ Իրանի անտառների կայունության գնահատումը, կայուն կառավարման ռազմավարության մշակումը կարելի է ընդգրկել անտառային պաշարների պահպանության, կառավարման և արդյունավետ օգտագործման խնդիրների շարքում:

**Նպատակը և խնդիրները:** Աշխատանքի նպատակն է հանդիսացել՝ Իրանի Մազանդարան նահանգի «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կայուն զարգացմանը նպաստող գործոնների ուսումնասիրությունը, կայունության գնահատումը և կայուն կառավարման ռազմավարության մշակումը:

- Ելնելով նախանշված նպատակից՝ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.
- ուսումնասիրել «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների տեղագրական առանձնահատկությունները (տեղանքի բարձրություն, թեքություն, արևահայացություն), հողերի բուսածածկը, մեխանիկական (մեխանիկական կազմ) և ֆիզիկաքիմիական (էլեկտրահաղորդականություն, pH, մագնեզիում, կալցիում, կալիում,

ֆոսֆոր, ընդհանուր ազոտ, օրգանական ածխածին, ածխածին/ազոտ հարաբերակցություն) հատկությունները;

- վերհանել «Մեիրբանոուլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոուլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների բուսականության զարգացման վրա ներգործող գործոնները;
- բացահայտել «Մեիրբանոուլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոուլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կայուն զարգացմանը նպաստող որոշ գործոնների միջև առկա համահարաբերակցական կապերը;
- իրականացնել «Մեիրբանոուլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոուլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կայունության գնահատում;
- հավաքագրել Իրանի Մազանդարան նահանգի «Մեիրբանոուլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոուլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կոլեկտիվ կառավարման չափանիշների և ենթաչափանիշների վերաբերյալ տեղեկատվություն;
- կազմել անտառային պաշարների կոլեկտիվ կառավարման հիերարխիկ ծառը;
- մշակել «Մեիրբանոուլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոուլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառային պաշարների կայուն կառավարման քաղաքականություն:

**Գիտական նորայթը:** Առաջին անգամ Իրանի Մազանդարան նահանգի «Մեիրբանոուլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոուլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիներում իրականացվել է անտառների կայուն զարգացմանը նպաստող գործոնների ուսումնասիրություն, կայունության գնահատում և մշակվել է անտառների կայուն կառավարման ռազմավարություն:

Կազմվել է անտառային պաշարների կայուն կառավարման հիերարխիկ ծառը, տարբեր եղանակներով հավաքագրվել է «Մեիրբանոուլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոուլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կոլեկտիվ կառավարման չափանիշների ու ենթաչափանիշների վերաբերյալ տեղեկատվություն և հիերարխիկ մոդելի միջոցով իրականացվել է այս գոտիների անտառային պաշարների կայունության գնահատում: Մայիմենի վիճակագրական մեթոդով բացահայտվել են անտառների կայուն զարգացմանը նպաստող որոշ գործոնների միջև գոյություն ունեցող համահարաբերակցական կապերը: Ուսումնասիրվել են «Մեիրբանոուլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոուլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների տեղագրական առանձնահատկությունները, հողերի բուսածածկը, մեխանիկական ու ֆիզիկաքիմիական հատկությունները և գործոնային վերլուծության միջոցով բացահայտվել են բուսականության զարգացման վրա ներգործող հիմնական տեղագրական և էրաֆիկ գործոնները:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա առաջարկվել է անտառների կայուն կառավարման քաղաքականություն:

**Աշխատանքի գործնական արժեքը:** Կատարված ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կտան.

- Իրանի Մազանդարան նահանգի «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառային պաշարներն օգտագործել առավել արդյունավետ, որով կապահովվի անտառների բնականոն վերարտադրությունը;
- իրականացնել «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների զարգացման վրա բացասական ներգործող գործոնների ազդեցության չեզոքացմանը կամ թուլացմանն (մինչև էկոլոգիապես թույլատրելի սահման) ուղղված միջոցառումներ;
- ձեռնարկել «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների պահպանությանն ուղղված միջոցառումներ;
- ապահովել «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կայուն կառավարում, ինչը կնպաստի տեղի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

#### **Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնադրույթները.**

- Իրանի Մազանդարան նահանգի «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կոլեկտիվ կառավարման չափանիշների և ենթաչափանիշների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը;
- Ուսումնասիրվող տարածքի անտառների կայունության գնահատականը և կայուն զարգացմանը նպաստող որոշ գործոնների միջև առկա համահարաբերակցական կապերը;
- «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների տեղագրական առանձնահատկությունների, հողերի բուսածածկի, մեխանիկական և ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրության արդյունքները, բուսականության զարգացման վրա ազդող գործոնները;
- անտառային պաշարների կայուն կառավարման քաղաքականությունը;
- անտառային պաշարների կոլեկտիվ կառավարման հիերարխիկ ծառի կազմում:

**Աշխատանքի փորձահավաստիությունը:** Ատենախոսության նյութերը ներկայացվել և քննարկվել են “Applied Life Sciences ” (Կյանքի մասին կիռառական գիտությունը) միջազգային գիտաժողովում (Թուրքիա, Ստամբուլ, 2012թ.), “Climate Change and Towards Sustainable Future” (Կլիմայի փոփոխությունը կայուն ապագայի համար) միջազգային գիտաժողովում (Իրան, Թեհրան, 2014թ.) և ՀՀ ԳԱԱ Բուսաբանություն ինստիտուտի գիտլսոբիրում (2014թ.):

**Հրապարակումներ:** Ատենախոսության թեմայով հրատարակվել է 5 գիտական աշխատություն:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատությունում ընդգրկված են 48 աղյուսակ, 61 նկար և գծանկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 108 համակարգչային էջ: Օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է 85 անուն գրականություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Առաջին գլխում քննարկվում են անտառների կայունության գնահատմանը և կայուն կառավարման ապահովմանն ուղղված հայրենական և արտասահմանյան հեղինակների հետազոտությունների արդյունքները:

ԳԼՈՒԽ 2

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Երկրորդ գլխում նկարագրվում են ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող Իրանի Մազանդարան նահանգի «Մեհրբանուղ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուղ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների ֆիզիկաաշխարհագրական, օդերևութաբանական, երկրաբանական, սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, հողային, կենդանական ու բուսական պաշարները և տրվում է օգտագործված մեթոդների նկարագրությունը:

«Մեհրբանուղ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուղ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների կայունության գնահատմանն ու կայուն կառավարման ապահովմանն ուղղված ուսումնասիրություններն իրականացվել են 2010 – 2013 թթ. ընթացքում:

Անտառային պաշարների կայունության գնահատումն իրականացվել է հիերարխիկ մոդելի միջոցով: Կազմվել է անտառների կոլեկտիվ կառավարման հիերարխիկ ծառը (գծ. 1, աղ. 2), որոշվել են անտառների կոլեկտիվ կառավարման չափանիշների և ենթաչափանիշների զանգվածային միավորները (չափանիշի և ենթաչափանիշի կարևորությունը), որից հետո «Մեհրբանուղ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուղ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կոլեկտիվ կառավարման չափանիշների ու ենթաչափանիշների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվել է անտառների կայունության գնահատում: Անտառների կոլեկտիվ կառավարման չափանիշների, ենթաչափանիշների և այլընտրանքային հարաբերական զանգվածային միավորները որոշվել են «Expert choice Ver.11» համակարգչային ծրագրի միջոցով, որն ընդունում է միայն քանակական տվյալներ: Չափանիշները, ենթաչափանիշները և դրանց վերաբերյալ տեղեկատվությունները քանակական տվյալներով ներկայացվում են զույգ ցուցանիշների համեմատության սանդղակով (աղ. 1):

«Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կոլեկտիվ կառավարման «առողջություն և գոյատևում», «արտադրողական նշանակություն», «սոցիալ-տնտեսական գործոններ» չափանիշների ենթաչափանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է հիմնականում տեղի բնակչության հարցումների հիման վրա:

## Աղյուսակ 1

### *Ձույգ ցուցանիշների համեմատության սանդղակ*

Արժեք	Կարևորություն
1	2 ցուցանիշ ունեն միևնույն կարևորությունը
3	1 ցուցանիշը փոքր չափով կարևոր է մյուսից
5	1 ցուցանիշը կարևոր է մյուսից
7	1 ցուցանիշը շատ ավելի կարևոր է մյուսից
9	1 ցուցանիշն առավել կարևոր է մյուսից
2, 4, 6, 8	Արտահայտում են միջանկյալ արժեքները


«Կենսաբազմազանություն» չափանիշի ենթաչափանիշների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով որոշվել է անտառային բույսերի որակական և քանակական կազմը, այնուհետև հաշվարկվել է այս ենթաչափանիշները՝ Շենոնի բազմազանության, Մարգալեֆի տեսակային հարստության և Սիմփսոնի միակերպության ինդեքսները: Ինդեքսները հաշվարկվել են «PAST» համակարգչային ծրագրի միջոցով: 2 տարածքների անտառների կենսաբազմազանությունը բնորոշող ցուցիչների համեմատական վերլուծությունն իրականացվել է «Hotelling Trace» թեստի միջոցով:

«Կարգավորող շրջանակներ և ինստիտուցիոնալ քաղաքականություններ» չափանիշի ենթաչափանիշների վերաբերյալ տեղեկատվությունը մատուցվել է պետական մարմինների կողմից (Բնական պաշարների գրասենյակ):

«Ծառերի վիճակ» չափանիշի ենթաչափանիշների ու «առողջություն և գոյատևում» չափանիշի «ծառի վիճակ» ենթաչափանիշի 2-րդ մակարդակում ենթաչափանիշների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրվել է ծառերի բների ու պսակների ուսումնասիրությամբ և «SPSS 17» համակարգչային ծրագրի միջոցով ուսումնասիրության արդյունքների վերլուծությամբ:

«Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կայունության չափանիշների և ենթաչափանիշների հարաբերական զանգվածային միավորների համեմատական վերլուծությունն իրականացվել անկախ T-թեստի միջոցով:

Իշխանությունների և փորձագետների նկատմամբ ուսումնասիրվող տարածքների բնակչության վստահության և անտառների կառավարման գործընթացներին նրանց մասնակցության միջև կոռելյացիոն կապերը բացահայտվել են Սպիրմենի վիճակագրական մեթոդով:



**Գծանկար 1.** Անտառների կոլեկտիվ կառավարման հիերարխիկ ծառը



Ուսումնասիրվող տարածքների էկոլոգիական վիճակը գնահատելու նպատակով ուսումնասիրվել են նաև «Մեհրբանոռոլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոռոլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների տեղագրական առանձնահատկությունները (տեղանքի բարձրություն, թեքություն, արևահայացություն), հողերի բուսածածկը, մեխանիկական (մեխանիկական կազմ) և ֆիզիկաքիմիական (էկեկտրահաղորդականություն, pH, մագնեզիում, կալցիում, կալիում, ֆոսֆոր, ընդհանուր ազոտ, օրգանական ածխածին, ածխածին/ազոտ հարաբերակցություն) հատկությունները: Հետազոտություններն իրականացվել են ստանդարտ մեթոդներով:

Տեղագրական և էդաֆիկ գործոնների ազդեցությունը բուսածածկի վրա գնահատվել է գործոնային վերլուծության մեթոդով՝ «SAS» համակարգչային ծրագրի միջոցով:

### ԳԼՈՒԽ 3

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հիերարխիկ մոդելով գնահատվել է անտառների կոլեկտիվ կառավարման յուրաքանչյուր չափանիշի ու ենթաչափանիշի կանոնությունն անտառների կայունության ապահովման գործում և հաշվարկվել է չափանիշների ու ենթաչափանիշների հարաբերական զանգվածային միավորները, որոնք ներկայացված են 2–11 զծանկարներում: Գծանկար 2-ից երևում է, որ չափանիշներից ամենաբարձր հարաբերական զանգվածային միավորն ունի կենսաբազմազանությունը, որն էլ հանդիսանում է վճռորոշ գործոն անտառային պաշարների կայուն կառավարման ոլորտում: Ըստ չափանիշների զանգվածային միավորների՝ երկրորդ տեղում են սոցիալ-տնտեսական գործոնները, ինչն ընդգծում է հասարակության մասնակցության դերն անտառների կայուն կառավարման ոլորտում (զծ. 2):

Իրանի Մազանդարան նահանգի «Մեհրբանոռոլ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմոռոլ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կայունության գնահատման նպատակով հավաքագրվել է այս տարածքների անտառների կոլեկտիվ կառավարման չափանիշների և ենթաչափանիշների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:


Ուսումնասիրվող տարածքների անտառների կենսաբազմազանության վիճակը գնահատվել է Շենոնի տեսակային բազմազանության, Սիմփսոնի միակերպության և Մարգալեֆի տեսակային հարստության ինդեքսների միջոցով: Ուսումնասիրության արդյունքները ներկայացված են աղյուսակներ 3-ում և 4-ում: «Hotelling Trace» թեստի միջոցով իրականացվել է ուսումնասիրվող 2 տարածքների անտառների կենսաբազմազանության վիճակի համեմատական վերլուծություն, որի արդյունքում բացահայտվել է, որ 2 տարածքների միջև առկա է եղել նշանակալի տարբերություն ( $P_{\text{value}} = 0,007$ ). Ըստ Շենոնի տեսակային բազմազանության և Մարգալեֆի տեսակային հարստության ինդեքսների՝ կենսաբազմազանության վիճակն ավելի բարենպաստ է եղել «Նեկա-Չալեմոռոլ» ջրահավաք ավազանի 8-րդ

հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառներում, իսկ ըստ Միմփսոնի կիսկերպության ինդեքսի ընդհակառակը:


**Աղյուսակ 2**

*Անտառների կոյեկտիվ կառավարման չափանիշներն ու ենթաչափանիշները*


<b>Չափանիշ</b>	A1	Տարածք
	A2	Կենսաբազմազանություն
	A3	Առողջություն և գոյատևում
	A4	Անտառի արտադրողական նշանակություն
	A5	Սոցիալ-տնտեսական գործոններ
	A6	Կարգավորող շրջանակներ և ինստիտուցիոնալ քաղաքականություններ
	A7	Ծառերի վիճակ
<b>1-ին մակարդակի ենթաչափանիշ</b>	A2-B1	Մարգալեֆի տեսակային հարստության ինդեքս
	A2-B2	Միմփսոնի միակերպության ինդեքս
	A2-B3	Շենոնի տեսակային բազմազանության ինդեքս
	A3-B1	Հրդեհ
	A3-B2	Վնասատուներ և հիվանդություններ
	A3-B3	Ծառի վիճակ
	A4-B1	Յուրաքանչյուր հա-ի հաշվով անտառային ծավալ
	A4-B2	Կողմնակի արտադրանք (պտուղներ, խեժ, տերևներ, արմատներ)
	A4-B3	Վառելափայտ
	A5-B1	Եկամուտ
	A5-B2	Հասարակության մասնակցություն անտառների կառավարման գործընթացներին
	A5-B3	Իշխանությունների և փորձագետների նկատմամբ վստահություն
	A5-B4	Կրթություն
	A5-B5	Զբոսաշրջություն
	A6-B1	Պահպանության ծրագրերի իրականացում
	A6-B2	Անձնակազմ
	A7-B1	Ծառի բուն
A7-B2	Ծառի պսակ	
<b>2-րդ մակարդակի ենթաչափանիշ</b>	A3-B3-C1	Ծառի բուն
	A3-B3-C2	Ծառի պսակ
	A5-B2-C1	Մասնակցություն հակահրդեհային միջոցառումների իրականացմանը
	A5-B2-C2	Գյուղացիներին անտառների պահպանության մասին ուսուցում և ուղղորդում
	A5-B2-C3	Անտառային վնասատուների բացահայտում և կառավարում
	A5-B2-C4	Վառելափայտի փոխարեն հանածո վառելանյութի օգտագործում
	A5-B2-C5	Անտառների գյուղատնտեսական նպատակով օգտագործման կանխարգելում
	A5-B2-C6	Կանխարգելում անասունների մուտքն անտառ
	A5-B2-C7	Մասնակցություն ցանքին
	A7-B1-C1	Բարդ
	A7-B1-C2	Կամարաձև
	A7-B1-C3	Ոչ գլանաձև
	A7-B1-C4	Կենդանի ճյուղերով
A7-B2-C1	Անհամաչափ	
A7-B2-C2	Թույլ	




**Գծանկար 2.** Անտուրների կոլեկտիվ կառավարան չափանիշների հարարերական զանգվադային միավորները




**Գծանկար 3.** Անտուրների կոլեկտիվ կառավարան «կենսարգագադաուրություն» չափանիշի ենթաչափանիշների հարարերական զանգվադային միավորները




**Գծանկար 4.** Անտուրների կոլեկտիվ կառավարան «սոցիալ-տնտեսական օրոններ» չափանիշի ենթաչափանիշների հարարերական զանգվադային միավորները




**Գծանկար 5.** Անտուրների կոլեկտիվ կառավարան «հասարակության մասնակցություն» չափանիշի ենթաչափանիշների հարարերական զանգվադային միավորները




**Գծանկար 6.** Անտուրների կոլեկտիվ կառավարան «անտուր արտադրողական կրտակարան» չափանիշի ենթաչափանիշների հարարերական զանգվադային միակուրները




**Գծանկար 7.** Անտուրների կոլեկտիվ կառավարան «ստուրություն և ցրտաուր» չափանիշի ենթաչափանիշների հարարերական զանգվադային միավորները




**Գծանկար 8.** Անտուրների կոլեկտիվ կառավարան «վարտակուրող շրտակներ և ինտուրագուրալ րարարականուրներ» չափանիշի ենթաչափանիշների հարարերական զանգվադային միավորները



**Գծանկար 9.** Անտուրների կոլեկտիվ կառավարան «Շտուրի վնաս» չափանիշի ենթաչափանիշների հարարերական զանգվադային միավորները



**Չճակար 10.** Անտատների կրկնակի կատարման ծառի բուն հերթապահների 2-րդ մակարդակում հերթապահների հարաբերական զանգվածային միավորները



**Չճակար 11.** Անտատների կրկնակի կատարման ծառի վրայ հերթապահների 2-րդ մակարդակում հերթապահների հարաբերական զանգվածային միավորները

### Աղյուսակ 3

*«Մեհրբանոուր» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ գոտու անտատների կենսաբազմազանության վիճակը բնորոշող ցուցիչների արժեքները*

Դիտակետ	Մարզայեֆի տեսակային հարստության ինդեքս	Միմիստի միակերպության ինդեքս	Շեռնի տեսակային բազմազանության ինդեքս
P1	1,108	0,7234	1,063
P2	0,6676	0,9156	1,01
P3	1,61	0,8308	1,424
P4	1,82	0,8333	1,427
P5	0,8686	0,7432	0,8018
P6	1,17	0,9916	1,378
P7	1,846	0,7691	1,529
P8	1,108	0,8861	1,265
P9	1,516	0,7919	1,376
P10	0,3899	0,9735	0,6663
P11	0	1	0
P12	0,4551	0,8492	0,5297
P13	0,4024	0,6661	0,2868
P14	0	1	0
P15	0,3693	0,6388	0,2449
P16	0	1	0
P17	0	1	0
P18	0	1	0
P19	0,4809	0,7288	0,3768
P20	0	1	0
P21	0	1	0
P22	0	1	0
P23	0	1	0
P24	0,4343	0,8247	0,5004
P25	0	1	0
P26	0,4551	0,8492	0,5297
P27	0,4024	0,6661	0,2868
P28	0	1	0
P29	0	1	0
P30	0	1	0

Գծանկար 4-ից երևում է, որ անտառների կոլեկտիվ կառավարման «սոցիալ-տնտեսական գործոններ» չափանիշի ենթաչափանիշներից ամենաբարձր հարաբերական զանգվածային միավորն ունի կրթությունը: «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Չալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կոլեկտիվ կառավարման «կրթություն» ենթաչափանիշի ուսումնասիրությանը ներգրավված բնակչության շրջանակներում անցկացված հարցումները ցույց են տվել, որ ուսումնասիրվող տարածքներում մարդկանց կրթվածության մակարդակը ցածր է եղել (աղ. 4), ինչը վկայում է, որ հասարակության իրազեկումն անտառային պաշարների կարևորության և շրջակա միջավայրի վրա ներգործությունների մասին խիստ անհրաժեշտություն է անտառների կայուն կառավարման ապահովման համար:

#### Աղյուսակ 4

*«Նեկա-Չալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների անտառների կենսաբազմազանության վիճակը բնորոշող ցուցիչների արժեքները*

Դիտակետ	Սարգսլեֆի տեսակային հարստության ինդեքս	Միմիսոնի միակերպության ինդեքս	Շենոնի տեսակային բազմազանության ինդեքս
P1	0,6293	0,3446	0,4705
P2	0,5139	0,4101	0,7535
P3	0,8341	1,036	0,9395
P4	1,477	1,395	0,8073
P5	0,5581	0,4506	0,7846
P6	0,346	0,3488	0,7087
P7	0,4809	0,3768	0,7288
P8	1,116	0,8676	0,7937
P9	0,4809	0,6616	0,9689
P10	0,3607	0,5623	0,8774
P11	1,251	1,169	0,8043
P12	1,243	1,055	0,9572
P13	0,3338	0,4227	0,763
P14	0,3607	0,3768	0,7288
P15	0,3693	0,3927	0,7405
P16	0,3789	0,4101	0,7535
P17	0,3396	0,6237	0,9329
P18	0,6792	0,8247	0,7604
P19	1,618	1,307	0,6157
P20	0,3107	0,2788	0,6608
P21	0,5139	0,4101	0,7535
P22	0	0	1
P23	0,5139	0,6829	0,9898
P24	0,1038	1,117	0,7643
P25	0,8686	1,055	0,9572
P26	0,8341	0,7595	0,7124
P27	0	0	1
P28	0,8049	0,824	0,7598
P29	0,4024	0,2868	0,6661
P30	0,4343	0,6109	0,921
P31	0,3899	0,2712	0,6558
P32	0,7385	0,7299	0,6916

#### Աղյուսակ 4

*Ուսումնասիրվող տարածքներում հարցմանը մասնակցած բնակչության թվաքանակի տոկոսային հարաբերությունն ըստ կրթվածության մակարդակի*

Գյուղ	Մարդկանց թվաքանակի տոկոսային հարաբերությունն (%) ըստ կրթվածության մակարդակի				Դիպում կամ ավելի բարձր վկայական
	Ավագ դպրոց	Միջնակարգ դպրոց	Նախակրթարան	Կրթություն չստացած	
<b>Փեչետ</b>	5,3	15,7	23,7	50,0	5,3
<b>Շեխի-մահալե</b>	12,0	12,0	16,0	40,0	20,0
<b>Վելադիմենի</b>	17,7	6,7	22,3	37,8	15,5
<b>Չեմազդեհ</b>	11,6	5,9	5,9	41,2	35,4

Կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ ուսումնասիրվող տարածքներում գյուղացիների կողմից որպես վառելիքային օգտագործվում են նավթ, գազ և վառարանային: Ամենաշատ օգտագործվող վառելիքը վառելիքային է (աղ. 5): Հետևաբար, այս տարածքներում վառելիքի փոխարինումն անհրաժեշտություն է, քանի որ բուսական մնացորդները մեծ նշանակություն ունեն անտառների համար և որպես ապրելավայր են ծառայում կենդանի օրգանիզմների համար:

#### Աղյուսակ 5

*Ուսումնասիրվող տարածքներում բնակչության կողմից օգտագործվող վառելիքի քանակության տոկոսային հարաբերությունն ըստ վառելիքի տեսակի*

Գյուղ	Վառելիք (%)						
	Նավթ-գազ	Գազ-վառելիքային	Նավթ-վառելիքային	Վառելիքային	Գազ	Նավթ	Նավթ-գազ-վառելիքային
<b>Փեչետ</b>	5,26	10,53	36,80	5,25	0	5,26	36,9
<b>Շեխի-մահալե</b>	0,00	4,00	48,00	16,00	0	0,00	32,0
<b>Վելադիմենի</b>	0,00	8,90	22,20	26,70	0	6,70	35,5
<b>Չեմազդեհ</b>	5,89	0,00	23,53	5,88	0	0,00	64,7

Աղյուսակ 6-ում տրված է իշխանությունների ու փորձագետների նկատմամբ ուսումնասիրվող տարածքների բնակչության վստահության և անտառների կառավարման գործընթացներին նրանց մասնակցության միջև կոռելյացիոն կապը: Ըստ Սպիրմենի կոռելյացիոն գործակցի՝ իշխանությունների և փորձագետների նկատմամբ բնակչության վստահության բարձրացումը կհանգեցնի անտառների կառավարման գործընթացներին նրանց մասնակցության (մտավոր, ֆինանսական և գործնական) ակտիվացմանը: Այս կոռելյացիոն կապը նշանակալի է եղել միայն «Նեկա-Չալեմոռոդ» ջրահավաք ավազանի 8-րդ հաստիցով 3-րդ ու 4-րդ գոտիներում, քանի որ այս տարածքներում իրականացվում է պետական կառավարում: Իշխանությունների և փորձագետների կողմից հասարակության ներգրավումն անտառների կառավարման գործընթացներին հնարավորություն կտա նրանց օգտվել անտառային բարիքներից և առևտրայնացնել դրանք, ինչը կնպաստի տեղի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը: Հասարակության մասնակցությունն անտառների կառավարման

գործընթացներին կնպաստի նաև անտառային պաշարների պահպանությանը և կայուն օգտագործմանը: Ըստ Սպիրմենի կոռելյացիոն գործակցի՝ իշխանությունների նկատմամբ բնակչության վստահության բարձրացումը նաև գործոն կհանդիսանա, որպեսզի հասարակությունն անտառների դեգրադացման հետ կապված հետաքրքրություններն ու մտահոգությունները հաղորդի կառավարող մարմիններին կամ ՋԼՄ-ներին (հեռուստատեսություն, ռադիո): Սակայն այս կոռելյացիոն կապը նշանակալի չի եղել (աղ. 6):

**Աղյուսակ 6**

***Իշխանությունների և փորձագետների նկատմամբ ուսումնասիրվող տարածքների բնակչության վստահության և անտառների կառավարման գործընթացներին նրանց մասնակցության միջև համահարաբերակցական կապն ըստ Սպիրմենի կոռելյացիոն գործակցի***

<b>Փեչետ – Շեխի-մահալե</b>		Ինչպե՞ս ես մասնակցում անտառների կառավարման գործընթացներին (մտավոր, ֆինանսական և գործնական):	Երբևիցե հաղորդե՞լ ես իշխանություններին կամ ՋԼՄ-ներին (հեռուստատեսություն, ռադիո) գյուղում առկա խնդիրների կամ քո մտահոգությունների մասին:
	Ինչքա՞ն ես վստահում իշխանություններին և փորձագետներին:	<b>0.235<sup>ա</sup></b>	<b>0.108<sup>ա</sup></b>
<b>Վելայիմեհ - Չենագլեհ</b>		Ինչպե՞ս ես մասնակցում անտառների կառավարման գործընթացներին (մտավոր, ֆինանսական և գործնական):	Երբևիցե հաղորդե՞լ ես իշխանություններին կամ ՋԼՄ-ներին (հեռուստատեսություն, ռադիո) գյուղում առկա խնդիրների կամ քո մտահոգությունների մասին:
	Ինչքա՞ն ես վստահում իշխանություններին և փորձագետներին:	<b>0.398<sup>**</sup></b>	<b>0.124<sup>ա</sup></b>

<sup>ա</sup>Նշանակալիության մակարդակ (p<0,05), <sup>\*\*</sup>Նշանակալիության մակարդակ (p<0,01) և <sup>ա</sup>Ոչ նշանակալի

Ուսումնասիրվել է նաև «Մեհրբանուդ» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ և «Նեկա-Ջալեմուդ» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների հողերի բուսածածկը, մեխանիկական և ֆիզիկաքիմիական հատկությունները (աղ. 7-10):

## Աղյուսակ 7

«Մեհրբանտուր» ջրահավաք ավազանի Շիլերի 3-րդ գոտու հողերի բուսածածկը և մեխանիկական կազմը

Բարձրությունը ծովի մակարդակից (մ)	Տիղմ (%)	Ավազ (%)	Կավ (%)	Բուսածածկ (%)
600-900	41	18	41	55,1
900-1200	36	22	42	40,2
1200-1500	22	38	40	56,3
1500-1800	38	32	30	40,0
1800-2100	36	37	27	37,1

## Աղյուսակ 8

«Մեհրբանտուր» ջրահավաք ավազանի 1-ին հատվածի Շիլերի 3-րդ գոտու հողերի ֆիզիկաքիմիական հատկությունները

Բարձրությունը ծովի մակարդակից (մ)	EC (ՂեցիՄիմ/մ)	pH	Մագնեզիում (ppm)	Կալցիում (ppm)	Կալիում (ppm)	Ֆոսֆոր (ppm)	Շնրհանուր ազոտ (%)	Օրգանական ածխածին (%)	C/N
600-900	0,51	7,10	40,4	139,0	356	30,0	0,52	3,40	6,5
900-1200	0,46	6,97	38,0	143,9	342	25,8	0,49	2,95	6,0
1200-1500	0,36	6,71	32,3	135,0	327	20,6	0,30	2,20	7,3
1500-1800	0,41	6,80	28,5	122,5	311	16,0	0,31	1,50	4,8
1800-2100	0,39	6,20	22,0	113,0	302	15,0	0,20	1,15	5,8

## Աղյուսակ 9

«Նեկա-Ջալեմտուր» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների հողերի բուսածածկը և մեխանիկական կազմը

Բարձրությունը ծովի մակարդակից (մ)	Տիղմ (%)	Ավազ (%)	Կավ (%)	Բուսածածկ (%)
700-1000	39	20	41	60,2
1000-1300	34	27	39	67,1
1300-1600	38	25	37	40,3
1600-1900	36	29	35	39,2
1900-2200	39	32	29	38,0

## Աղյուսակ 10


«Նեկա-Ջալեմտուր» ջրահավաք ավազանի 8-րդ հատվածի 3-րդ ու 4-րդ գոտիների հողերի ֆիզիկաքիմիական հատկությունները

Բարձրությունը ծովի մակարդակից (մ)	EC (ՂեցիՄիմ/մ)	pH	Մագնեզիում (ppm)	Կալցիում (ppm)	Կալիում (ppm)	Ֆոսֆոր (ppm)	Շնրհանուր ազոտ (%)	Օրգանական ածխածին (%)	C/N
700-1000	0,45	7,30	46	158	384	29,4	0,42	3,23	7,7
1000-1300	0,41	7,20	47	160	365	30,1	0,40	3,10	7,8
1300-1600	0,37	6,95	38	143	369	25,7	0,36	2,76	7,7
1600-1900	0,39	6,74	32	137	346	20,4	0,38	2,00	5,3
1900-2200	0,36	6,30	26	128	329	19,0	0,31	1,90	6,1

